ՊՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ—ՏԱՐԻ—ԹԻՒ—1519—ՇԱԲԱԹ—13—ԱՊՐԻԼ—Ն. Տ.—25—ԱՊՐԻԼ—1874

ԳԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Ն. Պոլսոյ համար 8 Մէճ
» Գաւառաց » 10 Մէճ.
Վեցամսեայ Ն. Պոլսոյ » 4 Մէճ
» Գաւառաց » 5 Մէճ.
Ուրբաթանշիւր թերթի գին 60 փարա
Փոխանակման առդը մէկ անգամի համար 3 զուրուշ, երկու անգամի համար 2 զուրուշ, աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լայ։

ԱՐԱՔՍ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԱՅՄԱՆՔ

Գրուրս գացած լրագրաց ճանրու ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր—Տնօրէնին պիտի ուղղուի, կ. Պոլիս, Զինիլի խան, Մասիսի գրասենեակը։

Ձամբու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

ՊՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 13 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ Պոնապարթեան կուսակցութիւնը բարոյական նոր հարուած մը կրեց այս օրերս։

Գերմանիոյ դէմ կանխակալ խորհրդով ձեռնարկուած վերջին ճախող պատերազմն արդարացնելու համար Պոնապարթեանք կը պնդէին թէ Գաղղիացւոյ աղդը պատերազմ կուզեր, և թէ կառավարութիւնը զինեալ դաշնակիցներ պատրաստած էր, որք յետոյ ուխտադրժութեամբ ետ քաշուեցան և զինքը մենակ թողուցին։ Այս երկու յայտարարութեանց առաջինն արդէն ուտ ելած է Գաղղիոյ ներքին գործոց նախարարութեան դիւանէն ելած գրութիւններով, որք կը հաստատէին թէ շատ դաւառաց կուսակցներ հատարակաց կարծիքը շշափելով սառուցած և կառավարութեան խնացուցած էին թէ ժողովրդեան կարեւոր մասը պատերազմ չէր ուզեր։

Երկրորդին ալ մասամբ մ'անհիմն ըլլալը թէ և արդէն հասկցուած էր, բայց Պոնապարթեան կայսրութեան սրտաբին գործոց վերջինն նախարար կրամոն դ-քսին յիշած մէկ հեռագրին երկու տողերէն կը հասկցուէր թէ Աւստրիա ղէնքով օգնութիւն ընել խոստացեր է Նաբոլէոնի, բայց յետոյ չէ ուզեր կամ չէ կրցեր իր խոստումը կատարել։

Այս կարծիքն ալ այս օրերս ցրեցաւ Տը Պայսի կոմսին մէկ պաշտօնական նամակին հրատարակմամբը, յորմէ կը տեսնուի թէ Աւստրիոյ կառավարութիւնը քաջ համոզուած ըլլալով որ եթէ ինքը Գաղղիոյ հետ միանար, Ռուսիա ալ Բրուսիոյ հետ պիտի միանար, և հիւսիսէն առաջին հարուածն ինք պիտի կրեր, ոչ միայն զէնքով օգնութիւն և մինչև իսկ միջնորդութիւն չէ խոստացեր, այլ եւ յայտներ է թէ Աւստրիա կամայ ակամայ Անդղիոյ և Ամերիկայի օրինակին պիտի հետեւէր, այսինքն կատարեալ չեղոքութիւն պիտի պահէր, թէ և սրտիւ Գաղղիոյ համակիր եւ անոր զինուց յաջողութեան փափաքող էր։

Այս հրատարակութեամբ վերջին անգամ յայտնի եղաւ թէ կայսրութիւնն այս պարադայիս մէջ ալ սբառութեան դիմելով Գաղղիա խաբել և ինքզինք արդարացնել ուզած էր։

Գերմանական կաղէթ լրագիրը թէհրանէն գրուած նամակէ մ'առնելով կը ծանուցանէ թէ Պարսից Շահը Ռուսիոյ կառավարութեան նեկամամբ ունեցած բարեկամական զգացմանց նոր և պայծառ փորձ մը տալ կուզէ։

Քիվայի մէջ գերութեան դատապարտեալ չորս հինգ հազար Պարսից ազատութիւն դառնելով իրենց երկիրը վերադառնալը՝ բոլոր Պարսից համակրութիւնը գրաւեց Ռուսիոյ վրայ, և Շահն ալ երախտագէտ զգացմամբ Առիւծու և Արեգակն առաջին պատուանշանը ղրկեց Քիվայի Ռուսական զօրաց հրամանատար Քաֆման զօրավարին. ուրիշ հրամանատարաց և սպայից ալ այլ և այլ կարգի պատուանշաններ ղրկեց։

Բայց հիմայ ասոնք բաւական չը համարելով, յատուկ շքաղրամ մ'ալ պիտի կոխէ Քիվայի պատերազմին մասնակցող Ռուսական զօրաց բաժնելու համար։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Սանթանտէր 21 ապրիլ

Կը հաւատան թէ Հանրապետական նաւախումբը Բորթուկալէթ քաղաքը ռմբակոծելով, Բարլոսեանք մեկներ են անկէ։

Փարիզ 22 ապրիլ

Մաք-Մահոն մարշալ-խան պատգամաւորը եօթնամեայ իշխանութեան վրայ հանրապետական ձեւն հաստատ պահելու հարկը պիտի ցուցնէ գլխաւորապէս, միանգամայն միապետական վերանորոգման օրինաւորապէս հնարաւորութիւնն ընդունելով։

Պերլին 22 ապրիլ

Պ. Պիսմարքի առողջութիւնը բարւոքելու վրայ է։

Վիէննա 22 ապրիլ

Թրիէստ նստող Պ. Ռալի վաճառականին Պարոնութեան տիտղոս տրուեցաւ։

Լոնտրա 23 ապրիլ

Սուէյշի ջրանցքին ընկերութեան երեսփոխան Սըր Տ. Լանժ՝ լրագրոյ մէջ հրատարակեալ նամակաւ մ'ինքզինք Պ. Տը Լէսէբսի համամիտ կը ցուցնէ, և նաւաշատի յանձնաժողովին որոշմանց դէմ կը բողոքէ։ Միանգամայն առևտրական նախարարին նամակ մը գրելով կը յայտնէ թէ վաճառական նաւերը չեն կրնար Սուէյշի ջրանցքէն անցնել եթէ ընկերութեան որոշած տուրքը չվճարեն։ Ասոնց ալ գործոց նախարարին ալ կիմացնէ թէ այսուհետև անդղիական պատերազմիկ նաւերն ալ՝ առևտրական նաւուց պէս տուրք պիտի վճարեն։

Փարիզ 23 ապրիլ

Կը հաւատան թէ Շանպօրի կոմսը Գաղղիա երթալու դիտաւորութենէն ետ կեցեր է։

Յօմբրօսթրօ 23 ապրիլ

Քոնչա զօրապետն իր պատրաստութիւնները շարունակելու վրայ ըլլալով՝ Քարլոսեանց վրայ յարձակումը շաբաթ առաւօտ թողուեցաւ։ Հանրապետական զօրաց թիւը 70000 է հիմա։

Լոնտրա 24 ապրիլ

Օսմ.	Քոնս.	44 1/2
փոխ	1865	62 1/2
»	1869	50
»	1871	57 1/2
»	1872	68 3/4
Անդղ.	Քոնս.	92 15/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վ.Հ. Սուլթանն առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհեց Հըռոմի Օսմանեան նորընտիր դեսպան Ալէքսանտր Գարաթեոդորի էֆէնտիին։

Մայրաքաղաքիս Աւստրօ—Հունգարական նորընտիր դեսպան Զիչի կոմսն երէկ առաւօտ կ. Պոլիս հասաւ Թրիէստի՝ շոգենաւով։

Պետական խորհրդոյ նախագահ Բարձր. Քեամիլ փաշան, որ օդափոխութեան պատճառաւ ձմեռն Եդիպտոս գնացած էր, յառաջիկայ հինգշաբթի օրը կ. Պոլիս կ'սպասուի։

Յառաջիկայ չորեքշաբթի օրը Յունկարոյ Մէվլուտ ըլլալով, Սերվիոյ իշխանին գալն երկու օր ետ ձգուեցաւ։ Հետեւաբար հինգշաբթի կամ ուրբաթ պիտի դայ՝ ի կ. Պոլիս։

Կայսերական կառավարութիւնը Տատեան վսեմ. Յարութիւն պէյն Եւրոպա կը ղրկէ Վսեմ. Սատըզ փաշային ալակցելու և դանձային խնդրոյն վրայ սկսուած բանակցութիւնները՝ ի դլուխ հանելու պաշտօնով։

Վսեմ. Յարութիւն պէյի տընտեսական հմտութիւնն ու հանճարն արդէն ծանօթ ըլլալով, իր այս ընտրութիւնը յաջող տպաւորութիւն մ'ըրաւ Դալաթիոյ մէջ, և բանակցութեանց յաջողելուն վրայ յոյսերն աւելցուց։

Թղթատարութեան և հեռագրաց վերատեսչութեան օդնականի (մուավին) պաշտօնը վերցաւ։

Երեքշաբթի օրը Մեծ—Եպարքոսն Ապտուլլահեան եղբարց դարձանն երթալով, իւր ըստանկար պատկերը հանել տուաւ այլ և այլ կերպարանքով ու դիրքով։

Վերջին ժամանակներս մայրաքաղաքիս Զուգուր-չէշմէ թաղը քանի մ'անդամ հրձգութեան փորձ եղած էր։ Չորեքշաբթի դիշեր յիշեալ թաղին պահնորդն երկու չարագործ բռնեց, մէկը Ցաճիկ և մէկը Ցոյն, որք նորէն հրձգութեան փորձ կ'ընէին, և Ոստիկանութեան դուռը ղրկուեցան։

Անձնականութիւն նախատելու պըժդալի սովորութիւնն ազգային լրագրաց մէջէն Հայկական թատրոնները մէջտեղ մուտ դառնել կ'սկսի դժբաղդաբար։

Ցաւելով կը լսենք թէ Խնայողական անուն ընկերութեան անդամները թատերախաղաւնիթ եղեր են կէտիք փաշայի թատրոնին մէջ, և անմեղներն ալ մեղապարտներուն հետ մէկ ջրով կը լուացուին և առակ նըշանակի կըլլան։

Ասիկա այնպիսի անբարոյական գեղծումմ է, զոր ոչ մէկ երկրի օրէնք չներեր, և մեք՝ իբրև հրապարակային թերթ՝ կը բողոքենք այսպիսի գեղծման մը դէմ, որ ընկերական դառն հետեւանքներ կրնայ յառաջ բերել։

Կը լսենք թէ Օրագրոյ մեծապատիւ և անշահասէր խմբագիրը կնոջմէն դժգոհ մարդու մը փոխանորդ կանգնելով, կնոջը վրայ պռունկութեան յանցանք հաստատելու և ամուսնէն զատելու համար իր փաստաբանական հազուագիւտ տաղանդին բոլոր զօրութիւնը թափեր է դատաստանական խորհրդոյ առջև, և երբոր չէ կրցեր յաջողիլ, դատաստանական խորհրդոյ անդամոց վրայ կողմնակցութեան մուր քսելու եղեր է, բայց խայտառակաբար վռնտուեր է խորհրդարանէն։

Կը լսենք դարձեալ թէ Մամուլ անուն խայտառակ թերթն անցեալները պատուաւոր անձի մը դէմ առանց ստորագրութեան վատահամբաւիչ նամակ մը հրատարակած ըլլալով, զրկեալը դատ բացեր է ոստիկանութեան դուռը, և Մամոյ խմբագիրն ալ նամակագիրը մատնելով, վերջինը 5 լիրա տուգանքի դատապարտուեր է։

ԷՕԳԻ

Ազգ. Հիւանդանոցի վաղ ըՖներէն Գումգապու Թէօքէրէհանէ փողոցը արսա մը 4 1/2 կանդուն երեսով ընդամենը 144 կանդուն մահիւլ եղած ըլլալով, Հոդաբարձութեանս կողմանէ ազդարարութիւն կըլլայ թէ՝ ո՛վ որ կուզէ գնել զայն, Թուականէս ինչուան ութն օր կրնայ Հիւանդանոցի գրասենեակը ի Մեծ—Նոր Խան թ. 49 ներկայանալով, սակարկութեան մտնել։

Հոդաբարձութիւն
1874 ապրիլ 13 Ազգ. Հիւանդանոցի

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ԵՍԱՀԱՏԸ ՈՒՏՈՒՏԻԷ

12 ապրիլ	ուրբաթ իրիկուն	46,13
13 »	շաբաթ առաւօտ բացուեցաւ	46,19
	կէս օր	46 13

Կ. Պոլիս 12 ապրիլ

Սօսիէթէ ժէնէրալի բաժինք Անդ. լիր.		5.30
« փոխանակութեան »		3.30
Կ. Պոլսոյ Պանքային »		4.20
Քրէտի ժէնէրալ »		7.25
Քրէտի Օսթրօ—Թիւրք		1 50
Երկաթուղեաց հին	Ֆր.	99 3/4
« նոր		72 1/2
Փոխ. 1863	»	315
» 1865	» »	315
» 1869	» »	253
» 1872	» »	69
Փոխ. 1873		
Թրամուայ	Օսմ. լիր	5.30

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ
12 ԱՊՐԻԼ

Անգլ. ոսկի զուրուշ		110, 25
Նապոլեան ոսկի	»	87 25
Իմպերատոր Ռուս	»	90
Գորշմից	»	51, 20
Գինէ Ֆրանք	»	—
Չինգնոց	»	104 10
Պլինտ	»	123

ԱԶԳԱՅԻՆ

Ռուսատանէն գրուած նամակ մը տխրաւիթ լուրեր կուտայ մեզ Ս. Էջմիածնայ վանուց մէջ վերջին ժամանակներս անցած անցեալ վրայ։

Վեհ. Կաթողիկոսի ձեռնասուն Մանկունին՝ միաբանութեան հետ անսանելի դատողութեամբ վարուելով և Արարատ ամսագրին մէջ՝ ալ քանի մը յօդուած հրատարակելով սատիկ ատելի եղեր է միաբանութեան եւ այս պատճառաւ անհամաձայնութիւն ծագեր է Վեհ. Կաթողիկոսին և միաբանութեան մէջ։

Միւս կողմէ Վեհ. Կաթողիկոսը Պալաժէնիական Սինոդին կարծեցեալ իրաւունքներն հետ ղեհատ սեղմելով, Սինոդականներէն ամանք և Պալաժէնիական Պրոկուրորը Ռուսիոյ կառավարութեան դանդատեր եւ անոր միջամտութիւնը հրաւիրեր են։ Կառավարութիւնն ալ պատուեր տուեր է Վեհ. Կաթողիկոսին որ Պալաժէնիայի կարգադրութեան համեմատ Սինոդին իրաւունքներն անվթար պահէ, քանի որ այն կարգադրութիւնը փոխուած չէ։

Դարձեալ Ռուսիոյ կառավարութիւնը որոշեր է բոլոր այլադաւան ազգաց դպրոցներն արքունի դպրոցաց վերատեսուչներուն հսկողութեանն ու կառավարութեանը յանձնել, և միայն պարզապէս ծխական կամ եկեղեցական դպրոցները, որոց մէջ եկեղեցւոյ պաշտօնեայք կը պատրաստուին, եկեղեցական իշխանութեան ձեռքը թողուլ։ Հետևաբար հարցուցեր է Վեհ. Կաթողիկոսին թէ որո՞նք են այս վերջին կարգի դպրոցները։ իսկ Վեհ. Կաթողիկոսը չէ ուզեր բնաւ ընդունիլ այս որոշումը, այլ ամեն հայկական դպրոցաց ներքին և արտաքին կառավարութեան իրեն վերապահելու ըմբոստը յայտներ է։

Այս տեղեկութիւններէն յայտնի կը տեսնուի, որ կառավարութեան միջամտութիւնը, ինչպէս հոս, նոյնպէս նաև Ռուսիոյ մէջ մեր անհամաձայնութեանց և գժտութեանց հետևանքն եղած է, մանաւանդ, ինչպէս կրնանուի, Պալաժէնիականք բռնի հրաւիրեր են այդ միջամտութիւնը ի վնաս եկեղեցւոյ պատուոյն և շահուց*։

Ո՞վ են այդ Սինոդականք, Հայաստանեայց եկեղեցւոյ ո՞ր օրէնքով կարգուած են, ո՞ր վիճակներէն եւ յորմէ՞ ընտրուած են։ Հայաստանեայց եկեղեցին չճանչեր զադոնք իբրև խորհրդական կաթողիկոսի, հետևաբար ո՛չ նշանակութիւն մ՚ունին ադոնք Հայաստանեայց եկեղեցւոյ առջև և ոչ որ և է սինոդական իրաւունք։

Կը ցաւինք որ Վեհ. Կաթողիկոսն առաջին օրէն չմերժեց այդ ապօրէն Սինոդը, ինչպէս որ ազգն արդէն խնդրած էր իրմէ, այլ կերևի թէ անուղղակի միջոցներով ուզեր է այդ մարմինը չեզոքացնել, և այս հետևանքը ծագեր է։

Մեզ կը թուի թէ Վեհ. Կաթողիկոսն այս անուղղակի միջոցներն 'ի բաց թողլով, արիաբար եկեղեցւոյ շահն ու իրաւունքը պաշտպանելու պէտք է աշխատի։ այո՛, պէտք է բացարձակապէս մերժէ այդ Պալաժէնիական Սինոդը, որ Հայաստանեայց եկեղեցւոյ ամբողջութեան ներկայացուցիչը չէ, և որոյ անունն իսկ սխալ և անվաւեր է։

Հայաստանեայց եկեղեցին՝ Սինոդ ըսելով՝ եկեղեցական ընդհանուր ժողովները միայն կը ճանչէ։ իսկ կաթողիկոսաց քով եպիսկոպոսներէ եւ վարդապետներէ խորհրդական ժողով մը դանուելն Հայաստանեայց եկեղեցւոյ վաղեմի սովորութիւնն է, և այսպիսի ժողով մ՚ալ ընդհանուր Հայաստանեայց եկեղեցւոյ կողմէն միայն կրնայ ընտրուիլ։

Դալով Ս. Էջմիածնայ միաբանութեան, որ կարծեցեալ Սինոդէն տարբեր օրինաւոր մարմին մ՚է, կը փափաքինք որ սիրով միանայ իւր գլխոյն հետ, և եկեղեցւոյ շահուն համար աջակից ըլլայ Անոր։ Այս ալ իմաստուն զոհողութեամբ միայն կրնայ ըլլալ։

Կարելի չէ՞ արդեօք Վեհ. Հայրապետին՝ դո՞նէ առ ժամանակ մը հեռացնել Աթոռէն գժտութեան պատճառ եղողները, ինչպէս որ ժամանակ ժամանակ օդափոխութեան պատրուակաւ տեսնուած են այնպիսիներ Պոլսոյ մէջ։

Մեք՝ թէ և Վեհ. Կաթողիկոսին կուրբաբար կամ շահասիրաբար ոչ ոք կարգացող խնկարկուներէն չենք, բայց այս պարագայիս մէջ, երբ Հայաստանեայց եկեղեցւոյ հանրական շահուց վտանգն ակներև է, եւ երբ Վեհ. Կաթողիկոսին կողմէն այն շահուց պաշտպանութեան փոյթ եւ ի հարկին ամեն զոհողութեան պատրաստակամութիւն տեսնենք, նուիրական և անհրաժեշտ պարտականութիւն կը համարինք Հայաստանեայց եկեղեցւոյ ամեն հարազատ զաւակաց՝ բանիւ և արդեամբ ձեռնտու ըլլալ Նորին Բարձր. Սրբազնութեան։

Անկիրվիա ենք, որ եթէ Վեհ. Կաթողիկոսն այս պարագայից մէջ ընդհանուր Հայ ազգին համակրութիւնն իր հետ ունենալով՝ անոր ըմբոստացմանց թարգման կանգնի, եւ այդ Սինոդական և դպրոցական խնդիրներն արժանապէս ներկայացնէ և բացատրէ առ որ անկ է, երկուքն ալ Եկեղեցւոյ և ազգին իրաւանց համեմատ կրնան լուծուիլ դտնել։

Կ. Պոլիս 12 ապրիլ 1874

. . . Խմբագրապետ Մասիս ազգ. օրագրի լրագրոյ։

Գաղատիոյ և այլ դաւառաց սոսկալի և առաստակալ ազգայնոց համար կազմուած յանձնաժողովն պատիւ ունի իւր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ մատուցանելու ամեն անձնց՝ որոնք մարդասիրաբար հաճեցան աղքատաց արտասուքները սրբել իրենց նուէրներովը։

Ուստի, յանձնաժողովն երբ ըստ բաւականին գինքը քաջալերուած տեսաւ, հաւաքած հանգանակութենէն առ այժմ 100 Օսմ. ոսկի Դաղատիոյ խղճալուսոյ համար Մեծ. Շամլեան Յովհաննէս աղայի ձեռամբ հեռագրի միջոցաւ ղրկուեցաւ այսօր, ինչպէս նաև 200 Օսմ. ոսկի Եօզղատի և իւր գաւառաց համար Կերմիրցի Մեծ. Սահակեան, Մ. Յարութիւն աղայի ձեռամբ։

Քաղցր է մեզ յուսալ, որ այս հանգանակութեան չմասնակցող բազմաթիւ ազգայինք չեն վարանիր իրենց արենակցաց ընդ հուպ օգնութեան հասնելու, նկատելով առաջին անգամ հաւաքած հանգանակութեան վաղ ընդ փոյթ ապահով կերպիւ կարօտելոց ղրկուիլը։

Խնդրեմ, . . . խմբագրապետ տէր, որ բարեհաճիք սոյն երկտողիս ձեր ազգօգուտ Մասեաց հիւրընկալ էջերուն մէջ տեղ մը շնորհել, ընդունելով մեր խորին յարգանաց հաւատին։ Մնամ անձնուէր

սիրելի ազգիս, Նախագահ
Յանձնաժողովոյ սովատանջ
ազգայնոց
Յակոբ Վարդապետ
Աշոտ Փաշեան

ՓՆՋԻԿ

Աղէտալի պատմութիւն Հայոց յեղէն ժամանակաց 'ի Ռոսատան(*)։

Ա.

Թէպէտ և յետ կործանման թագաւորութեան Հայոց ի Կիլիկիա, և դառնալոյ Հայրապետական Աթոռոյն ի Սոյ Էջմիածին, ազգն մեր աշխարհէ յաշխարհ հալածանօք և դերութեամբ ցրուած լինելով՝ մնացել էր փոքրական իւր հայրենիքէն յոյժ և յոյժ հեռի, որպէս բազմութիւն ոչխարաց՝ որ ոչ միայն է անհովիւ, այլ և անտէրութեան և վտարանդութեան այն զարհուրելի ատելանին մէջ է մնացած, որ հօտ անդամ կոչուելու չունի իրաւունք, Եւրոպայի, Ասիայի, Աֆրիկէի խորշերն ընկնելով, և ծմակային անկիւններն մոլորելով, և ամենայն տեղ երկաթի չղթայից ձեռնակապներով և ոտնակապներով կաշկանդ վելով. սակայն ատնակնկալ դիպուած մը նորա համար մեկ այնպիսի՝ մնաց անդամ անհասանելի 'դուռուքն՝ բացաւ, որ ոչ միայն տուեց նորան ընդարձակ մակաղատեղ, այլ և դիւրացոյց նորա ճանապարհն դէպ առ իւր հայրենիքն ընելի՝ ի Հայաստան, ճանապարհն՝ զոր Հռոմայեցւոց և Յունաց անդութ քաղաքաղիտութիւնն, և Պարսից և Սարակինոսաց անողոք բռնութիւնն ամենակերպ խրամաներով դժուարաղնալի և խսպառ անանցանելի էին արել, սկսեալ յաւուրց պատերազմաց Միհրդատայ։

Ա՛յս էր կործանումն Արեւելեան կայսրութեան Հռոմայեցւոց, որ ի բազում դարուց հետէ անցել էր ի ձեռս Յունաց, և որ՝ չատ էր աշխատել դեռ ևս սուրբ անուամբ պատուեալ Մեծին Թէոդոսի օրէն սկսեալ՝ Արշակունեաց և Բագրատունեաց Հայոց թագաւորութիւնքը՝ գլորելու համար, և ջերմեռանդ սիրով օգնել էր Ռուբինեանց թագաւորութեան կործանմանն։ Աշխարհակալ Բիւզանդիոնն՝ որպէս երկրորդ Հռոմ՝ կուլ գնաց Օսմանեան անպարտելի ինքնակալութեան, և անտէրունջ և վտարական Հայոց ազգն՝ որ քրիստոնեայ հաւատակիցներէն՝ քրիստոնէից մայրաքաղաքումն՝ քան յայլ ամենայն տեղիս՝ էր մշտ գլխահարութեամբ թշուառացած, դատաւ դիմաստիրա հիւրընկալութիւն այս թուրքիոյ նոր կայսրարքայութեան նոր անքրիստոնեայ մայրաքաղաքին մէջ, ուր՝ ոչ հայելով յայն, զի այժմ զատանի քառորդ միլիոնի չափ հայասեռ ժողովրդեան բազմութիւն, էր երբեմն՝ որ բաց ի մոյ հայրենադաւ և ազգուրաց Տէր Կիրակոսէ՝ ո՛չ գոյր ոք ի չարաբաստիկ ազգէն Հայոց։

Յաղթահիր միապետն Մէհէմմէտ Բ՝ Պրուսա քաղաքի մէջ իւր արքայական շքեղհայց արժանացուցել էր մէկ սեազլուսի Հայոց, որ յետ առման Պոլսոյ արքունական հրաւիրանօք տեղափոխուեցաւ ի մայրաքաղաքն, ուր և հիմնեց ազգի նոր ատաստանարան։

Յովակիմ եպիսկոպոս 1464 ամի, այսինքն զկնի ինն ամաց տիրելոյն Օսմանցւոց մայրաքաղաքին Յունաց, կոչեալ առաջին Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսոյ, յայնպիսի տէրունջ՝ որ միօրինակ և միաչափ հեռի էր ի հայրապետական աթոռոյ Էջմիածնի, Սսոյ, Աղթամարայ և Գանձասարայ, եղև արդարև մխիթարիչ ազգի, և յանձանձիչ տարադրեալ զաւակաց նորա։ Պատրիարքութիւնն Հայոց եղև պարգև շնորհաց Նախախնամութեան, որպէս նորահրաչ կղզի ի լայնածաւալ ովկիանոսի, ուր ամենայն նաւք և նաւակք և լաստք և լաստափայտք ծովածուփ ազգին՝ ցարդ յայսոդել են խարիսխ արկանել և այսուհետև ևս կարող պիտի լինին գտանել անդորր նաւահանգիստ ի բազմադիմի տլեկոծութեանց։

Այն վեց տունք Հայոց՝ որք բերուեցան ի Պրուսայէ՝ Օտալար անուամբ, և այլքանի մի գերդաստանք՝ որք փոխադրուեցան ի Դաղատիոյ, եղեն նահապետք այն բիւրաւոր բազմութեան, որք այժմ բընակեալ կան ի Պոլիս, և ի ձեռին իւրեանց ունին մեր ազգի հանդերձեալ զարգացման և յառաջադիմութեան առ հաւատչեայքն՝ շնորհօք այն երկնապարգև Սահմանադրական իրաւանց, որովք մեր մեռեալ, և ո՛չ թէ չորեքօրեայ նեխեալ, այլ և կմախացեալ ազգն՝ մորթով պատելով, և երբեմն երբեմն ազատ շնչառութեամբ կենդանութեան նշան ցոյց տալով՝ յուսով բարեաց կը լցնու ազգի սիրտն։

Թէպէտ եղել էին այնպիսի ժամանակներ ևս, որ արդի Հայոց ազգի նախնիքքն՝ բազում դարերով յառաջ քան զայս բազմութեամբ բնակուած էին ի Պոլիս, բազումք հասել էին բարձից՝ մեծամեծ պատուոց և փառաց, բազումք ստացել էին պատրիարքութիւն, սերատատութիւն, կիւրապաղատութիւն, և այլ աւագութիւն, և բազում քաջարի Հայ իշխանք՝ իւրեանց սուրն խնայելով մերկել իւրեանց պահպանութեան և պաշտպանութեան համար, իւրեանց արիւնն և կեանքն զոհել էին յոգուտ յունական դահին, և ստացել էին զօրավարութեան տիտղոսներ, և բազում հայազգի օրիորդներ՝ եղել էին կայսրուհիք Յունաստանի, և բազումք Հայ դիւցազն երիտասարդք՝ իւրեանց արիական բարեմասնութեամբք բազմել էին 'ի կայսերական գահն. բայց երբ Բագրատունեաց թագաւորութիւնն ընճիւղեցաւ ի Հայաստան, հայրենեաց տեսութեան կարօտակէզ հայրենասէր Հայերն դարձան ի հայրենիս իւրեանց ի Հայաստան, և այնուհետև Յունաց և Հայոց մէջ՝ մասնութեամբ Անէոյ և դառն մահուամբ Գագիկ թագաւորի՝ տարբաց անհաշտ ատելութիւն, զոր ընդ երկար չարունակեցին կայսերք Յունաց ընդդէմ իշխանապետաց և թագաւորաց Հայոց Կիլիկիոյ։

Վասն որոյ Հայք՝ չի երևիր թէ յետ այնորիկ ևս դարձուցած լինին իւրեանց երեսն՝ յընթացս իւր չորս հարիւր ամաց դէպ ի Կոստանդնուպոլիս, բացի թագաւորաց խնամութեանց, թէպէտ և 'ի սփիւռս Յունաստանի կային կամ ի հին ժամանակաց մնացած կամ նոր գաղթականն դնացած Հայեր, որ Յունաց մէջ մուլորվելով, և նոցա ծէսերն օր ըստ օրէ ստանձնելով՝ Հայհռոմ ցեղը սերեցին, մինչև փոքր առ փոքր ի ներքուստ որդնահար փտած ծառի նման կործանեցաւ այն թագաւորութիւն, և նորա տեղ հաստատուեցաւ Օսմանեան ինքնակալութիւնն։

Բայց որովհետև Հայերն՝ որպէս Յունաստանի մէջ՝ որ քրիստոնէից աշխարհ կը

* Միթէ չտեսնուեցա՞ն վերջին ժամանակներս վարձկան գրիչներ, որք Վեհ. Կաթողիկոսը պաշտպանել և շողոքորթել կարծելով՝ Պալաժէնիան ներբողելու յանդգնեցան, այն Պալաժէնիան, որ Հայաստանեայց եկեղեցւոյ կարգաց և աւանդութեանց աղաւաղիչ և Մայր Աթոռոյ իրաւանց եղծիչ օտարոտի օրէնք մ՚է, և որոյ դէմ Հնդկաստանի Հայք ժամանակաւ բողոքելէ դատ, երջանկայիշատակ Ներսէս և Մատթէոս Կաթողիկոսունք եւ վերջապէս 1866ին Կ. Պոլսոյ Ընդհ. ժողովն ալ բողոքած է։

(*) Տես Մասիս թիւ 1518։

թչուէր, չդտան երբէք քրիստոնէական մարդասիրութիւն և եղբայրսիրութիւն ցուցնող աչքերն, նոյնպէս և այլ քրիստոնեայ աշխարհաց մէջ՝ ուր տարածուած էր հռոմէական կղերի իշխանութիւնն, երբէք չունեցան հանդիստ. և ընդ հակառակն այս նոր անքրիստոնեայ տիրութեան մէջ դտան և կը դտանին այն անդորր կեանքն, ինչ որ նոցատէն անօրինակ խստութեամբ կը ջատագովին քրիստոնեայք. վասն որոյ սկսան՝ թէ ի մօտուստ դատատաց և թէ ի հեռաւոր աշխարհաց դէպ այն կողմն ժողովիլ։

Հեղինակ Ռ...

• • • Խմբագիր •

Թիֆլիզու Հայոց Թատերական վրայ համբաւ ստացած և արդէն քանի մ'ամսէ հետէ այս տեղ գտնուող Պ. Մինրդատ Ամրիկեանց, վերջապէս հաճեցաւ ապրիլ 7 կիրակի իրիկուն Բերայի Արևելեան Թատրոնին մէջ իր Թատերական ասպանդէն ճաշակ մը տալ մեր Պօլսոյ աղդայնոց։ Տեսարան բերուած խաղն էր Գերմանացի մեծանուն Շիլլէր բանահիւսին «Աւազակներ» անուն Թատերդութիւնը (տրամա), որոյ մէջ Պ. Մ. Ամրիկեան Ֆրանցի դերը կը կատարէր, Պ. Պ. Մաղաքեան Մաքսիմիլիան Մուրի, Պ. Ադամեան Կարլի, և Օրիորդ Աստղիկն ալ Ամելիոյ. իսկ աւազակաց դերերն ալ յաջողակ պարոններ։

Բայց դերասանաց խաղացման կերպին վրայ խօսելէ առաջ՝ կուզեմ խօսիլ Շիլլէրի Աւազակներու հայերէն թարգմանութեան վրայ, որոյ Ֆրանցի մասը կը պատկանի Ղզլարեցի Պ. Ն. Լալաեանցին՝ ուսանողի Ներսիսեան ուսումնարանի Թիֆլիզու, իսկ միւս մասերն ալ Պ. Ամրիկեանցին։ Նա՝ ըստ իմ հասկցողութեան՝ ոչ միայն ընաիր դատեցի այդ Թարգմանութիւնը, այլ հայերէն լեզուի հմուտ բանասէրը ալ հանդիսականաց մէջ նոյնը վկայեցին. պէտք է ըսել Թէ միայն Պ. Մ. Ամրիկեանցն էր առաջին Թարգմանչին լեզուով խօսողը բեմին վրայ. իսկ միւս դերասանք՝ երկրորդ Թարգմանչին։

Զնայելով որ այդ Թարգմանութիւնը մեծ դիւրութիւն կուտար դերասանաց՝ այդ խաղին խաղացման համար, պէտք է ըսել, որ նոյն իսկ քերթածն ամենաբծաբիններէն մին էր Հայոց լեզուով և Հայ դերասաններով հանդէս հանելու համար. սակայն առ հասարակ ամբողջ Թատերական խումբն այնքան ուշադրութեամբ խաղաց՝ որ բոլոր հանդիսականք գոհ և շնորհակալ եղան իրմէ։

Այս տեղ, • • • Խմբագիր, չեմ ուզեր երկար բարակ բանաքննութեան առակ ձգել մի առ մի դերասանները, համեմատելով իրենց խաղն իրենց դերին հետ։ Այս ինքս կզդամ Թէ սրբան դժուար է Հայու մը համար Եւրոպական կեանքը հայերէն պատկերացնել մանաւանդ Գերմանացի աւազակաց, այլ կուզեմ խօսիլ Պ. Մ. Ամրիկեանցի վրայ այնքան, որքան որ կարելի է խօսիլ դերասանի մը վրայ, որ առաջին անդամ Պօլսոյ բեմին վրայ կուգայ Գերմանացի ազնուականին կեանքը ձեւացնելու։ Առաջին հայեացքով մարդ կիմանայ իսկոյն Թէ Պ. Ամրիկեանց՝ Թատերական ասպանդը ձեռք բերելու համար խիստ ուշադրութեամբ մշակեր է զինքն այդ արհեստին մէջ։ Անաչառ ուշադրութեամբ նկատեցի Թէ արդեօք նայուածքներու նմանողութեան և հեռուստութեան մէջ կատարելագործեր է իր Թատերական ձիրքը, Թէ ոչ՝ ուսմամբ և կրթութեամբ յաջողեր է զինքը վարժեցնել այդպիսի դերերու մէջ ինքնապէս ազ և ինքնատեղծ ձեւացնող, խօսող, շարժող, կիրք և յուզմունք յայտնող, ցած կամ բարձր խօսող և այլ մանր մունր հանդամանքներ ցոյց տուող ըլլալու, որոնք իսկոյն դերասանի մը ատաղանդին յատկութեան նշանները ցոյց կուտան։ Պէտք է ճշմարիտն ըսել, որ Պ. Ամրիկեանց կարելի եղածին չափ այն իրիկունը Թատերաբեմին վրայ ցոյց տուաւ այդ կատարելութիւնները։ Իրաւ է որ խաղն Եւրոպական էր և խաղին ասարկայները Գերմանական. ոչ ես և ոչ Պ. Մ. Ամրիկեանց այդ կենաց ծանօթ չենք եղած 'ի մօտոյ, որ կարող ըլլայինք իսկ և իսկ բնականը ճանչել. ինչ որ նապատկերացուց, անդդամ անդութ, կեղծաւոր և սոսկալի հայրասպան մարդու մը դէմքն ու բարքն էր Եւրոպացւոյ հաղուստով՝ բայց Հայոց լեզուով խօսող։ Մեր դատատանը մեր վրայ խաղին դործած ազդեցութեան վրայ պիտի հիմնենք։ Արդ, ամբողջ Թատրոնը յաճախ յայտնեց իր գոհունակութիւնը ծափահարութեամբ, ցոյց տուաւ շատ անդամ որ կը հասկնայ և կընդունարատ դերասանին ձեւերը, խօսուածքները, շարժուածքները և այլն։ Պ. Ամրիկեանց այդ յատկութիւնքը ցոյց տուաւ մեզ բուն տեղին և ժամուն։ Պէտք է ըսել նաև Թէ բարերաղդութիւն էր իրեն համար որ այնպիսի յաջողակ խմբի մը պատահեցաւ, այն է Պ. Մաղաքեանի, Պ. Ադամեանի և Օրիորդ Աստղիկի, որոնք շատ հանդամանքներով հաւասարակշռեցան անոր, և խաղին ամբողջութեան հարկ եղած վեհականութիւնը տուին։

Բայց Թատերաբեմի վրայ Պ. Ամրիկեանցի տաղանդն աւելի ճանչելու և դընահատելու համար կը ցանկայինք որ հաճէր նա Հայոց կեանքէն առնուած քանի մը խաղեր խաղալ, ինչպէս որ տեսնուեցաւ Մշեցի (ԴԷԼԻԷԼ) դերին մէջ, և ինչպէս որ կը ըսենք Թէ իր հետ հարիւրէն աւելի Թատերական դրուածքներ ունի եղեր, որոնց մեծ մասը հայկական արդի կեանքէն առնուած են, հեղինակութեամբ Պ. Գաբրիել Սնուուկեանցի և այլոց. (Պ. Գ. Սնուուկեանց Ռուսաց կառավարութեան մէջ բարձր պաշտօն ունի)։ Պ. Ամրիկեանցէն կը խնդրենք զայս։ Այո՛, կը խնդրենք որ իրեն պէս տաղանդաւոր Հայ դերասան մը՝ ցոյց տայ մեզ այլ և այլ տեղեր բնակող, զանազան լեզու խօսող և կերպ կերպ կեանք վարող հայերը. այս պէտք է մեզ ստուգիւ իմանալ և ոչ Թէ Եւրոպականները, զորս եթէ տեսնել կուզենք, կարող ենք իրենց Թատրոններով մեր փափաքը գոհացնել։ Քանի տարի է որ Պոլիս Հայոց Թատրոն հիմնուած է, տասն տարիէն աւելի է որ դերասանական խումբեր կան մեր մէջ, բայց ո՞ւր են Հայոց հին և նոր կեանքէն առնուած պատուական Թատերդութիւնք, քանիո՞ն ընդ հանրացած է Պոլսոյ ժողովրդեան մէջ, ո՞ւր են մեր փոքր հռոմփեը (ՎԾԱՒԼՆԵՐԸ) և անոնց ստեղծած ժողովրդական եղանակները. — դեռ ո՛չ մէկին ունինք։ Ամ. ճանձրացանք ու զզուեցանք այդ դաղղիական Բօսմաններէն և Թատրոններէն։ Կը պարծինք Թէ դրականութիւն ունինք. ո՞ւր է մեր ժողովրդական դրականութիւնը. չէ՞ որ մի միայն Թատրոնը պիտի մըշակէ այդ դրականութիւնը։ Ցուսանք որ Պ. Ամրիկեանց Պոլսոյ Հայոց ժողովրդական Թատերական դրականութեան վերանորոգութեան պատճառ ըլլայ, ճաշակ և ծանօթութիւն տալով մեզ Թիֆլիզու Հայոց Թատերական ուղղութեանը, եւ մենք ալ օրինակ առնելով միացնենք մեր հանճարը Թիֆլիզցւոց հանճարին հետ, և ընտելացնելով մեզ անոնց դրականական և ժողովրդական բարքասէրն։

Գրանելիցերբոբ ...

Աբելեան Թատրոնին մէջ.

---

10 ապրիլ 1874 Կ. Պոլիս

• • • Խմբագիր •

Հաճեցէք երկարդս զետեղել Ձեր պատուական Թերթին մէկ անկիւնը որ առաքինութեան մէկ օրինակ կըընայ համարուիլ։

Վանայ Սրտամեռ գիւղի Արտաշիսեան Նարակառոյց Վարժարանին 'ի Նպաստ Հիւրմիւզեան Արժանապատիւ Տէր Յովհաննէս Հայրն Օսմանեան ոսկի մը շնորհած ըլլալով՝ կրկնութեանք հրապարակաւ մեր շնորհակալութիւնը յայտնել եւ միանգամայն նոյն բարի ձեռնարկին համար օգնութեան հրաւիրել բոլոր այն բարենպաստ սրտերը՝ որոց կարուպեան եղաւ ոյն Արժ. Տէր Յովհաննէս Հայրը։

Մնամք

'ի Դիմաց Տնօրէն Ժողովոյ
Նոյն վարժարանի ընկերութեան

Խ. Մ. Գրիգորեան Պ. Յակոբեան.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԳՈՐԾՈՒԵԱՆ

ԲՆՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

Յօրինեաց

Ա. Մ. Գարագաշեան

Այս քերականութիւնը, որուն մէջ գործնական հրահանգներ միացեալ քերականութեան տեսական կանոններուն հետ, յօրինուած էր ըստ խորհրդոյ և թելադրութեան հմուտ և փորձ դասատուաց ոմանց Հայկական լեզուին, և ըստ օրինակի արդի դրութեան Եւրոպական լեզուաց լաւագոյն քերականութեանց։ Այս անգամ նոյնպէս շատերուն խրատուն և բաղձանաց համեմատ յաւելեալ և սրբագրեալ է կարևոր փոփոխութեամբ, ինչպէս պիտի տեսնուի առաջին տպագրութեան հետ բաղդատուելով։ Քերականութեանս օգտակարութեան ապացոյց են ոչ միայն զայն դործածողաց բանիւ և դրով տուած վկայութիւնք, այլ և արագ սպառիլն առաջին տպագրութեան։ Երկրորդ տպագրութեանս 'ի վերայ առաջնոյն ունեցած մեծ առաւելութեան նայելով, յուսամք Թէ սա քան զայն աւելի ընդունելութիւն պիտի դտնէ։ Եթէ յարգոյ ուսուցիչք կամ այլ ոք՝ աւելի կամ պակաս կամ փոփոխութեան արժանի ինչ կը դտնեն 'ի սմա, Թող հաճին ծանուցանել մեզ, պատրաստ եմք ընդունիլ ամենայն դիտողութիւն բանաւոր վասն երրորդ տպագրութեան։

Վաճառի առ Յ. Գավաֆեան. դին 10 դահեկան։

ԳԷՈՐԳ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

ԳՈՐԾ ՖԵՐՏԻՆԱՆԴ ՇՄԻԴԹԻ

Թարգմանեաց Փ. Վարդանեան

Տէր եւ Հրատարակիչ՝
Տիգրան Յ. Տեպէեան

1874

Ֆերտինանդ Շմիդթ, մեծ անուն կը վայելէ Գերմանիոյ մէջ իբրեւ վարժապետ եւ մատենագիր։ Գերմանացի հեղինակներ՝ արժանի դասն դարդաբել նորա շնորհալի դրչին արձանագրեալ պատկով՝ եւ դասեցին զնա այն մեծատաւորական հերոսներու կարդը՝ որովք կը պարծի Գերմանիան։

Մենք ալ կառաջարկենք Հայոց երիտասարդներուն Շմիդթի դրքոյկը ընթեռնուլ, որ կը գտնուի Իզմիր Տեսեեանց դրատնոյը եւ Պոլիս Գաֆֆեան եղբարց քով։ Դին 5 ղրշ։

ԳԱՎԱՅԻՏԻ ԱՐԷՊԻՅԷ

ԴԱՍԱԳԻՐՔ ՏԱՃԿ. ԼԵԶՈՒԻ

Հեղինակութիւն Գալըշեան
Պօղոս Հիֆենտիի •

Ամեն դրավաճառաց քով կը գտնուի. դին 6 ղրշ։

ՊԱՁԷՆ ՄԱՐԱԶԱԽՏԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՏԵՏՐ ԻԳ.

Կը գտնուի ամեն Հայ դրավաճառաց եւ լրագրավաճառաց քով, Մահմուտ փաշան Թօհաֆէի Պ. Ճանիկի խանութը եւ կամ ըլլի դլխաւոր պարտքան։

Դին իւրաքանչիւր տետրակին 40 փարայ։

ԷՋԴ

Բերայի Սուրբ Երրորդութեան Եկեղեցւոյ կալուածներէն՝ Բերա Մեծ փողոց 190, 192 և 194 Թիւերով երբեմն Ազգաղար և այժմ Թատրոն Արևելեան անուն կալուածը յիշեալ Եկեղեցւոյ կալուածոյ Հոդաբարձութեան կողմէն վարձու պիտի տրուի. վարձել ուզողը պարտի առաւօտեան մինչև ժամը 2 նոյն Հոդաբարձութեան տեղեակը դիմել։

Բերա 5 ապրիլ 1874

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

'Ի Նպաստ

Աղքատասիրաց Ընկերութեան

Թիւք տոմսակաց 15,000
Շահելի դումար 85,000

36 Շահող Թիւերու բաժնուած.

Այն վիճակահանութիւնը որչափ որ յառաջիկայ մարտ 1/13ին տեղի ունենալու համար ծանուցուած է, սակայն տոմսակաց մեծագոյն մասը դեռ ծախուած չըլլալուն, ընկերութեան որոշմամբ՝ երեք ամիս ևս պիտի երկարի։ Հետևաբար յառաջիկայ 1874 յունիս 1/13 ին անպատճառ վիճակահանութիւնս տեղի պիտի ունենայ։ Եթէ մինչև այն որոշեալ ժամանակը տոմսակները չծախուին, ծախուած թիւերուն համեմատ պիտի ըլլայ շահող թուոց բաժանումը։

Զմիւռնիա 21 փետր. 1874 Վարչութիւն

Աղքատասիրաց Ընկերութեան

ԻԼԱՆ

ՇԵՐԲԷԹԻ ԽԱՅՐԻՑԷ

Պահարմ մէկ մասիմինոյ Պրուսայա կիսատուպ կելենդերին քէսրէթի օրտուղու ճիհէթէ սայիր պաղը վարօրեր իլէտիկի կիպի Շերբէթի խայրիյէ վարօրլերինտէն տախի թէրթիպ օրանան 12 նիւմէրօրու գասպիտ նամ վարօր կելենքէք չէհրի նիսանն օնունճը կիւնիւնտէն իթիպարէն պէհէր հաֆթա չէարշէմպէի մէ ճիւմա իրթէսի կիւնլերի սաաթ իքիտէ Տերսաաէթտէն հարէքէթլէ Մուսանեայա մէ անտէն Կէմլէյիկէ կիտէճէկի մէ պէհէր հաֆթա ճումա մէ փաղար իրթէսի կիւնլերի սաաթ օն իքիտէ Կէմլէյիկտէն քըյամ իլէ Մուսանեայա մէ օրատան տախի սաաթ իւչտէ հարէքէթլէ Տերսաաէթտէ ավտէթ իսչէկի, մէ եօլճուլարտան մէ եիւքտէն սայիր վարօրլարտա պլընան մընդտար իւճրէթ ախպ իսիլճէկի Շերբէթի խայրիկ թարաֆընտան իլան օրանուր. մէ սուհուլթի մուճիպ օրմաք իւզրէ իշլու վարօր թիւճճար եիւքլէրինի Եալը քէօշկի բիշկեահէնտա չամանտրըյէ պաղը պուլունտուղու մահալտէն մէ եօլճուլէրինի քէօրիւտէն ալաճաղը մախլուս, ավտէթինտէ տախի եօլճուլէրինի քէօրիւյէ չդարտրդտան 'սոնրա՝ էշեայի թիւճճարկէ մէդքիւր չամանտրընա մահալինտէն մատնալիրէ թահվիլէն կէօմրիւկէ իլերաճ իլլէյճէկի տախի մալիւմ օրմաք իչուն պէյան ղընընուր։

28 Մարթ 1874

ԻԼԱՆ

Ասաքիրի Շահանէ նանը ազիզ խատրէսինին Գաբանը տաքիք մէ Հասքէօյ ատէյիրմէնլերի հասընլաթընտան օրմաք իւզրէ ֆիրուխթ օրունճաղ. օրան 70,000 գրչէ մրգտարի պէշինճի նիւմէրօ տաքիքին պէհէր գրչէսի 56 փարայա թալիպլի էօհտէսինտէ օրուպ, Նիսանը Բումինին օն պէշինճի բաղար երթէսի կիւնիւ գարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իշթիրատանա թալիպ օրանլար իլէ մուլթաղ գօմիսիօնընա մուրաճաաթ օրունճաղ 15000 գրչէ նէրլի գրրգրմը քէչի գրչընդն պէհէր գրչէսի 9 ղրշա օրարաղ թալիպլի էօհտէսինտէ օրաուղունտան, չէհրի մէդքիւրդն օն ալթընճը սալը կիւնիւ գարարը գաթիսի վերիլէճէյինտէն իթտանա թալիպ օրանլարդն մէդքիւր կիւնլերտէ Տարը Շուրայի ասքերիյէ կէլմէլերի։

10 Նիսան 1874 Պապը Սէրասքէրի

Պէյդօղ Տէպաղիսանէի ամիրէսի իչին միւպայնա օրունճաք օրան 150,00 դանթարը փարտամուտը պէհէր դանթարը 115 ղրուշա օրարաք թալիպլի էօհտէսինտէ օրուպ, իշպու Նիսանը Բումինին օն պէշինճի փաղար երթէսի կիւնիւ գարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթա իթմէյէ թալիպ օրանլարդն նէյմի մէդքիւրտէ Տարը Շուրայի ասքերիյէ կէլմէլերի։

8 Նիսան 1874 Պապը Սէրասքէրի

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ
կապահովագրեմ ինչպէս նաեւ ամբարտաւանութիւն չհրդեմ, կամարտուելու դէմ եւ թեւերս ամրացնեմ, յանձն առած Աւելի մանրամասն տեղեկութեան համար դիմել առ
ՀԱՅՐ ԱՌԱՔԵԼԻ ԴԻՄ
ԱՂԵՔՍԱՆԴՐ ԲԷՔՄԷԶ Ի ՊԱՀՃԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒ

Այս լրագիրը չաբաթը երեք անգամ կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Կ. Պոլիս Զինիլի խաների արկը թիւ 15 Մասիսի խմբագրատունը իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուց սենեակները։

ԻԶՄԻՐ. Յակոբեան ազգ Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խոսրով էֆ. Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Յակոբեան ազգ Թանկէրեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Յովակիմ ազգ Ուղուն-արդեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր ազգ Էլմասեան
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զաքարեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ ազգ Փոթիկեան.
ԵԱՇ. Մ. ազգ Խաչիկեան.
ՖՈՒՇԱՆ Մկրտիչ ազգ Աչճեան.
ՀԱԼԷՊ. Նիկողայոս ազգ Տէր Մարգարեան.
ԵՐԶՆԿԱՑ. Թադէոս ազգ Բաղրատունի։
ՍԻՎՐԻՀԻՍԱՐ. Կարապետ ազգ Վարդանեան

Ուրիշ քաղաքներէ ստորագրուել ուզողներն այս տեղերէն մէկուն հետ կրնան թղթակցիլ։

ԹՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԹԻԹԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
Կ. ՊՕԼԻՍ ՁԻՆԻԼԻ ԽԱՆ



ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1874 ԱՊՐԻԼ 4 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ 'Ի ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Բոսֆորէն էջնող շոգենաւերը

11 30 Եէնիմահալլէէն Պէօյիւքա. Թարապիա, Եէնիք. Սմիէն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնաւուտաք. Օրթաքէօյ, Պէշիկթաշ.

12 Հէյքէզէն, Բաչապահճէ, Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլ. Վանիք. Զէնկէլք. Պէյլէրպէյ, Գուզկունճուք։

12 Արնաւուտաք. Գուրուչէ. Օրթաքէօյ, Պէշիկթաշ, Գապաթաշ։

12 30 Վանիք. Զէնկէլք. Պէյլէրպէյ, Օրթաքէօյ, Գուզկունճուք, Պէշիկթաշ.

1 Եէնիմահալլէէն Մէզարպ. Պէօյիւքա. Թարապիա, Եէնիք. Պօյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնաւ. Գուրուչէ. Օրթաք. Պէշիկթաշ։

1 30 Ր. եւ Ա. Գաւաքէն Մէզարպ. Պէօյիւքա. Պէյքօզ, Բաչապ. Գանլ. Ա. Հիսար. Վանիք. Զէնկէլ Պէյլէր. Գուզկ. Իսկիւսար.

3 Եէնիմահալլէէն Մէզարպ. Պէօյիւքա. Թարապ. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնաւ. Գուրուչէմէ, Օրթաքէօյ, Պէշիկթաշ Գապաթաշ.

3 30 Պէօյիւքաէրէ, Պէյքօզ, Բաչապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլք. Պէյլէրպ. Գուզկունճուք։

4 Մէզարպուրնուէն, Պէօյիւքա. Թարապիա, Եէնիքէօյ, Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնաւ. Օրթաք. Պէշիկթաշ.

5 30 Եէնիմահալլէէն Պէօյիւք. Թարապ. Եէնիք. Պօյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնաւ. Օրթաք. Պէշիկթաշ.

6 45 Եէնիմահալլէէն, Պէօյիւքա. Թարապ. Պէյքօզ, Եէնիքէօյ, Էմիր. Գանլ. Պօյաճ Ր. Հիսար, Գանտ. Արնաւ. Պէյլէրպ. Օրթաքէօյ, Գուզկունճուք, Պէշիկթաշ. Իսկիւսար։

7 Արնաւուտաքէօյէն, Գուրուչէշմէ, Օրթաքէօյ, Գուզկունճուք, Պէշիկթաշ, Գապաթաշ։

8 Եէնիմահալլէէն Պէօյիւքէրէ. Թարապիա, Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնաւ. Գուր. Օրթաքէօյ. Պէշիքթաշ։

8 15 Պէօյիւքաէրէէն. Պէյքօզ. Բաչապ. Գանլ. Ա. Հիսար. Գանտիլլի. Վանիքէօյ. Զէնկէլքէօյ. Պէյլէրպէյ. Գուզկունճուկ. Իսկիւսար։

8 45 Մէզարպուրնուէն Պէօյիւք. Թարապ. Պէյքօզ. Սմիէն. Պօյաճ. Պէպէք Արնաւ. Օրթաքէօյ Պէշիկթաշ։

10 15 Եէնիմահալլէէն. Մէզարպ. Պէօյիւք. Թարապիա, Եէնիք Էմիրկէն Ր. Հիսար Արնաւ. Գուրուչ. Օրթաքէօյ, Պէշիկթաշ, Գապաթաշ։

Կոմուրջէն ելնող շոգենաւերը

1 Պէշիք. Օրթաք. Արնաւ. Պէպէք Ր. Հիսար, Պօյաճ. Եէնիք. Թարապ. Պէօյիւքաէրէ Եէնիմահալլէ։

1 30 Գապաթաշ. Իսկիւսար. Պէշիքթաշ. Գուզկունճուք. Օրթաքէօյ. Պէյլէրպէյ. Արնաւուտաքէօյ. Գանտիլլի. Ր. Հիսար. Պօյաճքէօյ Գանլըճա. Եէնիքէօյ. Պէյքօզ. Թարապիա. Պէօյիւքաէրէ. Եէնիմահալլէ։

2 15 Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնաւ. Պէպէք. Ր. Հիսար Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէօյիւքա. Մէզարպ.

3 30 Իսկիւսար. Գուզկունճուք. Պէյլէրպէյի Զէնկէլքէօյ Վանիքէօյ. Գանտիլ. Հիսար. Գանլըճ. Բիֆթի փաչա մահալլէսի. Բաչապաղչէ. Պէյքօզ. Պէօյիւքաէրէ։

3 30 Պէշիքթաշ. Օրթաքէօյ. Արնաւուտաքէօյ. Պէպէք Ր. Հիսար. Էմիրկէն. Սմէն. Եէնիքէօյ. Պէյքօզ Թարապիա. Պէօյիւքաէրէ. Եէնիմահալլէ։

5 Պէշիկթաշ, Օրթաք. Արնաւ Ր. Հիսար Պօյաճ. Եէնիք. Պէյքօզ. Թարապ. Պէօյիւք. Մէզարպ. Եէնիմահալլէ։

5 30 Իսկիւսար. Պէշիկթաշ. Գուզկունճուք. Օրթաքէօյ. Պէյլէրպէյ Զէնկէլքէօյ Վանիքէօյ Պէպէք Արնաւուտաքէօյ։

6 30 Պէշիկթաշ, Օրթաք. Արնաւ. Գանտ. Ր. Հիսար, Էմիրկէն. Եէնիք. Թարապ. Պէօյիւքա. Մէզարպ.

8 Պէշիկթաշ Օրթաք. Արնաւուտաքէօյ, Պէպէք. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիքէօյ. Թարապիա, Պէօյիւքաէրէ, Եէնիմահալլէ.

9 30 Իսկիւսար, Գուզկ. Պէյլէր. Զէնկէլ. Վանիք. Ա. Հիսար, Գանլ. Բաչապ. Պէյքօզ։

9 45 Գապաթաշ, Պէշիքթաշ, Օրթաքէօյ. Գուրուչէշմէ, Արնաւ. Ր. Հիսար Պօյաճ. Եէնիք. Թարապ. Պէօյիւք. Մէզարպ. Ր. եւ Ա. Գաւաք.

10 30 Գուզկ. Պէյլէրպէյ. Զէնկէլ. Վանիք. Գանտիլլի. Ա. Հիսար Գանլ. Բաչապ. Պէյքօզ. Պէօյիւքաէ.

10 30 Պէշիքթաշ. Օրթաքէօյ. Արնաւուտ. Պէպէք. Ր. Հիսար. Էմիրկ. Սմէն. Եէնիք. Թարապիա. Պէօյիւք. Եէնիմահալլէ։

11 Գուզկունճուք. Պէյլէրպէյ. Զէնկէլքէօյ. Վանիքէօյ, Ա. Հիսար, Գանլըճա, Բաչապահճէ, Պէյքօզ։

11 Պէշիկթաշ. Օրթաքէօյ. Գուրուչ. Արնաւուտաքէօյ. Պէպէք. Ր. Հիսար. Էմիրկ. Եէնիք. Թարապիա. Պէօյիւքաէրէ։

11 30 Գապաթաշ. Պէշիքթաշ. Գուզկունճուք. Օրթաքէօյ. Գուրուչ. Անաւուտաքէօյ.

12 Պէշիքթաշ, Օրթաքէօյ, Արնաւուտաք։

Իսկիւսարու շոգենաւոց երթեւեկութիւնը.

Ժամ	Իսկիւսարէն կոմուրջ.	Ժամ	Կոմուրջէն Իսկիւսար.
12		12	15
12	30	12	40
1		1	10
1	30	1	40
1	50	2	5
2	25	2	30
2	50	3	10
3	20	3	40
4		4	10
4	30	4	40 Պէշիկթաշ հանդիպելով
5		5	10
5	30	5	40
6		6	30
6	35	7	
7	30	8	
8	15	8	30
8	40 Պէշիկթաշ հանդիպելով	9	
9	10	9	30
9	40	10	
10		10	20
10	30	10	40
10	40	11	
11	5	11	15
11	25	11	40
11	40	11	50
12		12	5

TCHITLI

ՀԱՆԲԱՑԻՆ ՋՈՒՐ
ՁԻԹԼԻԻ
ՊՐՈՒՍԱՅԻ ՄՕՏ
Կայսերական հրամանագրով վերջնել
Այս հանքային ջուրն Եւրոպայի մէջ գանուած մի եւ նոյն կարգի ջրոց ամենանուն հետ կրնայ մրցիլ իւր բուժական յատկութեամբը։
Կը վաճառուի մեծ եւ փոքր քանակութեամբ՝ Կ. Պոլիս՝ վարձակալ ընկերութեան կեդրոնատեղին Սուլթան Համամ թիւ 11, Կ. Պոլիս Եէնի ճամի փողոց թիւ 16, 18, 20 եւ 22 Տէլլա Սուատի գեղարանները։

ՉԳՈՒՇԱՑԷՔ ԳՈՂԵՐԷՆ

Ամենէն ճաշակալի գողերը՝ պատուաւոր վաճառականաց ստորագրութիւնն ու նշանը խարդախողներն են։ Շատ անգամ դէշ ու առողջութեան ճաշակալի բաղադրութիւններ կը ծախեն հնարագիտներուն նշաններովը եւ անոնց բուն վաճառքին անունն ու համբաւովը կը կոարեն։

Ռօժէի մաքրողական փոշին, որ Փարիզի բժշկական Ակադեմիային հաւանութիւնն ստացած է, շատ վաճառուելուն պատճառաւ ամենէն շատ կը խարդախուի։

Ուստի գնողները չխաբուելու համար շիշերուն պատեանը փոխոխել հարկ եղաւ։

Այսուհետեւ բուն Ռօժէի փոշի պէտք է ճանչնալ այն շիշերը՝ որոց ծայրերը՝ ներկայ կնիքը կը գտնուի չորս գունով։

ROGÉ
Tout flacon ne portant pas ce cachet imprimé en quatre couleurs devra être considéré comme ne sortant pas de la fabrique de l'inventeur.
PARIS

LLOYD SUISSE
ԼՈՅԴ ՍՒԻՍ
Ապահովութեան ընկերութիւն ցամաքի ծովու և գետի վրայ ապրանք փոխադրելու
Լոնդոնց դէմ.
Ի ՎԻՆԹԻՐԹԻՒՐ
Կապահովէ վաճառք, դրամ եւ այլն, ծովու եւ գետի վրայ եւ բոպական Հելլենական եւ Օսմանեան շոգենաւերով եւ առագաստանաւերով եւ ցամաքի վրայ ալ երկաթուղիներով փոխադրելու վտանգաց դէմ ինչպէս նաեւ բոսֆորով ամենակողմ ղրկուած լեցուն նաւակներ եւ ծրարներ։
Աւելի մանրամասն տեղեկութեան համար պէտք է դիմել առ
ԸՆԴՀԱՆՈՒՐՍ ԳՈՐԾԱԿԱԼ
ՀԷՐՄԱՆ ՀԷԼՊԻՆԿ
Ի Զմիւռնիա
ԳՈՐԾԱԿԱԼ
ԱՂԵՔՍԱՆԴՐ ԲԷՔՄԷԶ
Ի Պահճէ գաբու

ROB BOYVEAU LAFFECTEUR

Հաւանութիւն ստացած Գաղղիոյ, Պէլճիոյ, Աւստրիոյ եւ Ռուսիոյ մէջ եւ Տօքթոր Ժիրօ որ Սէն—Ժերվէի ստորագրութեամբ վաւերացած։

Արիւնը մաքրող դեղերուն մէջ այս շիրուպը միշտ առաջին տեղը բռնած է, թէ իւր ազդեցութեամբը որ 25 տարիէ 'ի վեր փորձով հաստատուած է, եւ թէ իւր միայն բուսական բաղադրութեամբը Հիմնովին կը բուժէ, առանց սնդիկի, մորթի հիւանդութիւնները, որ քիւն, խոյլ եւ ծննդարերութենէ ու չափահասութենէ պատճառեալ հիւանդութիւններ, նմանապէս եւ մանաւանդ թէ նոր եւ թէ հին տարափոխիկ հիւանդութիւնները՝ որք քօրահիւսով սնդիկով, եւ իոտիւր որ բօթասիումով են բուժիր։

Կը գտնուի Փարիզ Բիչէր փողոց 12, եւ Կ. Պոլիս Եէնի Ճամի փողոց թիւ 16, 18 20, Տէլլա Սուատի, Պ. Ծաննիի, Օսմանիաի. Վէլիցի, Զօպանօղլուի, Բաստպեանի, եւ Ալէքեանի դեղարանները։